Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.191

ԲԱՏՐԱԿ

ԻՆՉ Է ԱՍԵԼ ԼԵՆԻՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

„ՊՐՈԼԵՏԱՐ"-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

ԹԻՖԼԻՍ — 1931

01.03.2013

15 JAN 2010

26.
34.6
Բ-33
Սպ

„ԿՈՄՈՒՆԱՆԵՐԸ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,— ԱՀԱ ՎՈՐՏԵՂ Է ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՌՆՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱՀԱ ԻՆՉԻ ՄԵՋՆ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԸ, ՈՒԺԵՐԻ ՏՆՏԵՍՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ, ՁՐԻԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ“

ԼԵՆԻՆ

15378-57

Տպ. Ա.Ֆ. Մյասնիկյանի անվ., հրատ. „Զարյա Վոստոկա“-ի, Ռուս. 33
Գրավիր 1014. Գլավլիտ 833, Քանակ 9000.

„ԱՅԺՄ ՄԵՐ ԽՆԴԻՐՆ Է ԱՆՑՆԵԼ ՀՈՂԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ, ԱՆՑՆԵԼ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՍԱԿԱՅՆ ԽՈՐՀԸՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՎՈՉ ՄԻ ՀԱՐԿԱԴՐՈՒՄ ՅԵՎ ՎՈՉ ՄԻ ՍՏԻՊՈՒՄ: ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱՆ ՀԻՄՆՎՈՒՄ Է ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ, ՀՈՂԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՆՑՆԵԼ ՄԻՄԻԱՅՆ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ“

ԼԵՆԻՆ

ԻՆՉ Է ԱՍԵԼ ԼԵՆԻՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ*)

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄ ԵՐԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ

Խորհրդային Միության բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության պայքարը յերկրի տնտեսության վերակառուցման, սոցշինարարության թափի ուժեղացման համար, քանի գնում այնքան խորանում է ու ամրանում:

Մեծ են, չտեսնված ու հսկայական մեր բազմաթիվ նվաճումները աշխատանքի բոլոր ճակատներում: Այդ հսկայական նվաճումներն են, վոր հնարավորություն են տալիս մեր կուսակցությանն առանց այլևայլության դնել սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցման ավարտման խնդիրն այս տարվա՝ հնգամյակի յերրորդ վճռական տարվա ընթացքում: Սակայն ինչքան մեծ են մեր նվաճումները, այնքան սուր են դասակարգային պայքարի պայմանները, այնքան ուժեղ կերպով դիմադրություն են ցույց տալիս յերկրի կապիտալիստական մեռնող տարրերը, այնքան ուժեղ կերպով աշխատում են կասեցնել մեր առաջընթացը կուլակներն ու նրանց պաշտպանները, կուլակության

*) Արտատպված „պրոլետարից“: Տես „պրոլետարի“ №№ 19, 20, 21, Հունվարի 22, 24, 25, 1931 թիվ

ագենտուրան մեր կուսակցության շարքերում՝ աջ և «ձախ» դաղտնի թե բացարձակ ոպորտունիստները։

Դասակարգային թշնամին վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում, մինասարարությունից սկսած մինչև սպառնալիքներն ու բռնությունները, մանավանդ գյուղում, դուրս գալով գյուղատնտեսության վերակառուցման, կոլեկտիվացման ծավալման, կոլխոզների կազմակերպման ու զարգացնելի բոլշևիկյան աշխատանքների դեմ։

Կուլակը շատ լավ գիտե, վոր կոլեկտիվացումն արմատախիլ է անելու իր դարգացման վերջին հնարավորությունները, վոր կոլեկտիվացման այսորվա ծավալումը դա վաղվա համատարած կոլեկտիվացման ծավալումն է ու ամրապնդումը, հետևապես նաև կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան այդ համատարածի բազայի վրա։

Այդ բոլորը կուլակը շատ լավ գիտե, վորովհետև մեր կուսակցությունը յերբեք չի յել թաղցրել և չի թաղցնում հիմա յել՝ իր անելիքներն այս ուղղությամբ, այլ ընդհակառակը, միշտ ել շեշտել է ու շեշտում է, վոր մենք ձգտում ենք դեպի այդ խնդրի լուծումը, վոր մենք ամեն կերպ աշխատում ենք նախապատրաստել, հարկավոր պայմաններ ստեղծել համատարած կոլեկտիվացման և կուլակության լիկվիդացիայի հաղթանակն ամբողջ Միության մեջ ապահովելու համար։

ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆԵՐԸ ԿՈԼԽՈԶ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՄ

Յեվ ահա կուլակն իր ամբողջ ուժով դուրս է գալիս մի առանձին ատելությամբ կոլխոզների դեմ, աշխատելով քայքայել կոլխոզները, թույլ չտալով նրանց զարգանալու և անվերջ ստի, կեղծիքի, պրովոկացիաների միջոցով նա աշխատում է վարկաբեկել կոլխոզի գաղափարը մասսաների առաջ։

Կուլակների սիրած պրովոկացիաներից մեկն ել կոլխոզների դեմ այն է, վոր նրանք ճիգ են գործադրում հավատացնելու չքավորին ու միջակին, վոր իբր թե Լենինը դեմ է յեղել կոլխոզներին, վոր գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցը իբր թե Լենինը չի բարձրացրել յերբեք, և վոր Լենինի ժամանակ կոլխոզների մասին խոսք անգամ չի յեղել։

Հասկանալի յե, իհարկե, վոր այս և նման բոլոր կուլակային հայտարարությունները պրովոկացիայի արդյունքներ են միայն և ուրիշ վոչինչ։

Գյուղատնտեսության վերակառուցման, կոլեկտիվացման անհրաժեշտության խնդիրը մեր կուսակցությունը և ընկ. Լենինը դրել են՝ համաձայն մարքսիզմի հիմնական սկզբունքների, հեղափոխությունից դեռ շատ առաջ, ինչպես նաև հեղափոխությունից հետո, սկսած Մեծ Հոկտեմբերի առաջին որերից։

Լենինը միշտ և ամեն անգամ, յերբ խոսք է յեղել գյուղի ու գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին, նա շեշտել է կոլեկտիվացման, համայնացրած խոշոր տնտեսության անհրաժեշտությունը, վոր-

պես ՄԻԱԿ յելք մեր գյուղի աշխատավոր մասսաների համար իրենց յետամնացութիւնից և ծայր աստիճան խեղճ ու չքավոր դրութիւնից:

Ամեն անգամ Լենինը ամենավճռական կերպով շեշտել է և ասել, վոր մեր գյուղը չի կարող առաջ գնալ հին ուղիներով, վոր ապրել հին ձևերով ել հնարավոր չե, վոր մանր, անհատական տնտեսութիւնները չեն կարող բարձրացնել միջակի ու չքավորի տնտեսության դրութիւնը առանց կոլլեկտիվացման:

Ահա ինչ է ասել Լենինը այդ մասին իր ճառերում և գրվածքներում 1917 թվից սկսած:

ԼԵՆԻՆԸ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ մի քանի խոսք մանր, անհատական տնտեսութիւնների մասին:

«ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԻ ԱԶԱՏԵԼՈՒ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ և ՃՆՇՈՒՄԻՑ» *ասում է Լենինը:*

Մի ուրիշ հոդվածում Լենինը գրում է՝ «ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՔԻՑ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԴՈՒՐՍ ԳԱԼ», *այսինքն չեն կարող ազատվել կարիքից վերջնականապես:*

Իր ճառերից մեկում, արտասանած դեռ 1917 թվի մայիսին գյուղացիական պատգամավորների համառուսական Առաջին Համագումարում, Լենինն ասում է՝

«ՅՆԹԵ ՄԵՆՔ ՆՍՏԵՆՔ ՀԻՆ ՁԵՎՈՎ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԹԵՊԵՏ և ՎՈՐՊԵՍ ԱԶԱՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԶԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ, ՄԻՑԵՎՆՈՒՅՑՆ Է, ՄԵԶ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄ»:

Ուրեմն մենք վոչ միայն չենք կարող զարգացնել մեր նվաճումները, «յեթե մենք նստենք ՀԻՆ ՁԵՎՈՎ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ», այլև մենք կկործանվենք այդ մանր տնտեսութիւնների յետամնացության, չքավորության, անվերջ կարիքի ու խավարի ծանրության տակ: Ահա ինչպիսի սպառնալիք ու չարիք է մեր գյուղատնտեսության զարգացման համար մանր, ցրված, հին՝ պապական ձևի տնտեսությունը:

ԻՆՉՊԵՍ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԿՈՒՂՈՒՑ

Մի ուրիշ տեղ, իր 1928 թ. ճառերից մեկում, Լենինն ավելի չեշտակի յե դրել այս հարցը՝

«Ապրել ինչպես առաջ, հին ձևով, ինչպես ապրել եյինք մինչև պատերազմը, ել հնարավոր չե, և մարդկային ուժի ու աշխատանքի այն կողոպտելը, վորը հե տևանք է մանր, անհատական գյուղական տնտեսության, ել չի կարող շարունակվել»:

Իսկ ո՞ւր է յելքը, ի՞նչպես դուրս գալ, ազատվել այդ կողոպուտից, վո՞ր տեղ է փրկությունը—այս հարցերին Լենինը վճռականապես պատասխանում է՝

— Միակ յելքն ու փրկությունը մենք պետք է փնտրենք կոլլեկտիվացման ուղիներում, արտելներ,

կոլխոզների, կոմմունաների կազմակերպման, խոշոր, համաձայնացած կոլեկտիվ տնտեսությունների մեջ։

Ահա Լենինի պարզ ու վորոշ պատասխանը՝

«Միայն ընդհանուր ԱՐՏԵԼԱՑԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ աշխատանքի ոգնությամբ կարելի յե դուրս գալ այն փակուղուց, վորի մեջ ձգել ե մեզ իմպերիալիստական պատերազմը»։

Կամ՝

«Անհրաժեշտ ե անցնել ԽՈՇՈՐ ՈՐԻՆԱԿԵԼԻ տնտեսությունների ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՇԱԿՄԱՆԸ, վորովհետև առանց այդ բանի չի կարելի դուրս գալ այն խառնակությունից, այն ուղղակի հուսահատ դրությունից, վորի մեջ գտնվում ե Ռուսաստանը»։

Ընկ. Ստալինը ոգտվելով Լենինի այդ մեջբերումներից, գրում ե իր պատասխանների մեջ կոլխոզնիկների հարցերին՝ «Ի՞նչ ե այդ բոլորը նշանակում։ Դա նշանակում ե, վոր կոլխոզները միակ միջոցն են հանդիսանում գյուղացիների համար կարիքից և խավարից դուրս գալու»։

Այսպես ուրեմն, Լենինը վոչ միայն անհրաժեշտ ե համարել կոլխոզների կազմակերպումն ու զարգացումը, նա կոլխոզների ուղին ՄԻԱԿ միջոցն ե համարել աշխատավոր գյուղացիության փրկության, «խավարից ու կարիքից» դուրս գալու համար։

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՈՒՂԻՆ — ԴԱ ԼԵՆԻՆՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆ Ե

Բայց ահա և մի շարք ուրիշ մեջբերումներ, վորոնք ցույց են տալիս, վոր կոլխոզների, արտելների, կոմմունաների, մի խոսքով աշխատանքի կոլեկտիվ ձևերին անցնելը Լենինի համար, մեր կուսակցության համար սպառահական խնդիր չի յեղել, 1918 թվին, նոյեմբերի ութին, այսինքն Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարեդարձին ընկ. Լենինն իր արտասանած ճառի մեջ հենց առաջին խոսքերից կանգ ե առնում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրի վրա՝ հետևյալ կերպով՝

«Հոկտեմբերյան հեղափոխությունը խնդիր ե դրել իր առաջ կապիտալիստներից խլել գործարաններն ու գավոդները, արտադրության միջոցները, համաժողովրդական դարձնելու և հողը հանձնելով գյուղացիներին, ԳՅՈՒՂԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ»։

Պարզ ե, վոր այդ «սոցիալիստական վերակառուցումը» հենց կոլեկտիվացումն ե, վոր կա, կոլխոզն ե, վորովհետև բացի կոլխոզներից, բացի կոլեկտիվացման այս կամ այն ձևից ուրիշ վոչ մի «սոցիալիստական վերակառուցում» չի կարող լինել։

ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Լենինը՝ խորհրդային իշխանության առաջին որերից դնելով կոլլեկտիվացման անհրաժեշտության խնդիրը, շատ լավ գիտեր, իհարկե, վոր լայնածավալ ու յետամնաց յերկրի միլիոնավոր ցրված ու մանր անհատական տնտեսությունների վերակառուցման գործը այնքան ել հեշտ գործերից չէ, վոր մի շարք դժվարությունների վերացման հետ է կապված այս խնդիրը։

Լենինի վերև հիշված ճառում մենք կհանդիպենք այսպիսի խոսքերի՝ «ԻՀԱՐԿԵ ՄԵԿԻՑ մեզ չի աջողվի ամեն տեղ անցնել հողի ոգտագործման հասարակական ձևերին։ ԿՈՒԼԱԿՆԵՐՆ ԱՄԵՆ ԿԵՐՊ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ԿՏԱՆ ԴՐԱՆ, *և իրենք գյուղացիներն ել հաճախ ընդդիմադրում են համայնական սկզբունքների անցկացմանը գյուղատնտեսության մեջ։ Բայց քանի դնա և* ԻՆՁՔԱՆ ՇԱՏ ՈՐԻՆԱԿՆԵՐԻ ՎՐԱ, ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՎՐԱ ԳՑՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈԶՎԻ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԵՋ, ԱՅՆՔԱՆ ԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ԳՈՐԾԸ ԱՌԱՋ ԿԸԳՆԱ»։

Մեր ոպորտունիստներից մանավանդ աջերին, յերբ կուլակի դիմադրությունը թերագնահատելով խոսում են կուլակի դեպի սոցիալիզմ «խաղաղ ներքաշման» մասին, ավելորդ չե նորից հիշել Լենինի այդ վճռական հայտարարությունը կուլակների դիմադրության մասին։

Հանճարեղ սարդությամբ միևնույն արտասանած ճառում, Լենինը նորից շեշտում է՝

«ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՏԱՆԵԼ ՑԵՌԱՆԴՈՒՆ ԿԵՐՊՈՎ, ՎՈՉ ՄԻ ԶԻՋՈՂՈՒԹՅՈՒՆ (ни на какие сделки) ՉԱՆԵԼ ՆՐԱՆՑ։ Միջակ գյուղացիության հետ մենք կարող ենք աշխատել և նրանց հետ միասին ել պայքարել կուլակների դեմ։ Միջակների դեմ մենք վոչինչ չունենք, նրանք կարող ե պատահել սոցիալիստներ չեն և սոցիալիստներ չեն ել դառնա, բայց փորձը նրանց ցույց կտա և կհաստատի հողի հասարակական մշակման ոգուտը և նրանց մեծամասնությունը դիմադրություն չի ցույց տա»։

Այդպես եր ասում Լենինն այն ժամանակ դեռ, յերբ կոմունաներ և արտելներ համարյա դեռ չկային, յերբ կուլակները դեռ նոր եյին փորձում գլուխ բարձրացնել մեր դեմ։

Լենինը կուլակների մասին

Բայց կուլակության դեմ ընկ. Լենինն ունի ավելի վճռական խոսքեր։

«ԿՈՒԼԱԿՆԵՐՆ ԱՄԵՆԱԳԱԶԱՆ, ԱՄԵՆԱԿՈՊԻՏ և ԱՄԵՆԱՎԱՅՐԵՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐՆ ԵՆ, *վորոնք*

ուրիշ յերկրների պատմության մեջ շատ անգամ են վերականգնել կալվածատերերի, թագավորների, քահանաների և կապիտալիստների իշխանությունը։ Կուլակները ավելի շատ են, քան թե կալվածատերերը և կապիտալիստները։ Բայց և այնպես կուլակները՝ փոքրամասնություն են ժողովրդի մեջ... ԱՅԴ ԱՐՅՈՒՆԱՐԲՈՒՆԵՐԸ ՀԱՐՍՏԱՑԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ՇՆՈՐՀԻՎ, նրանք կուտակեցին հազարներ և հարյուր հազարներ, բարձրացնելով հացի և մյուս մթերքների գները։ Այդ սարդերը հարստացան պատերազմից աղքատացած գյուղացիների և քաղցած բանվորների հաշվին։ Այդ տզրուկները աշխատավորների արյունն եյին խմում, հարստանալով այնքան ավելի, վորքան ավելի յեր քաղցած մնում բանվորը քաղաքներում և ֆաբրիկաներում։ Այդ վամպիրները իրենց ձեռքի տակ եյին առնում և շարունակում են առնել կալվածատիրական հողերը, նրանք նորից և նորից են ստրկացնում չքավոր գյուղացիներին»։

Ահա ինչ է ասել Լենինը կուլակի մասին և ինչպես մոտեցում և ցուցադրում նա դեպի այդ ամենավայրենի շահագործողների դասակարգը, դեպի այդ արյունարբուներն ու տզրուկները։ Հասկանալի յե, վոր առանց կուլակության դիմադրությունը ջախջախելու, առանց անընդհատ ու անողոք պայքարի կուլակության ու նրա գործակալների և պաշտպանների դեմ, մենք կոլխոզշարժումը առաջ չենք տանի, չենք կարող ծավալել կոլեկտիվացումը, չենք կարող ամրապնդել մեր կոլխոզները։

ՎԵՐԱՑՆԵԼ

ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարզ է, վոր յեթե մենք ցանկանում ենք լուրջ կերպով անցնել կոլլեկտիվացմանը, իսկապես ուժեղացնել մեր կոլխոզները, մենք պետք է ամենահամառ կերպով մինչև մերջ տանենք կոմկուսի գլխավոր գծի պահանջը՝ կուլակության լիկվիդացիան համատարած կոլլեկտիվացման բազայի վրա։

Ընկ. Ստալինն իր «Պատասխանների մեջ կոլխոզնիկներին» գրում է.

«Մենք համբերում եյինք այդ արյունարբուներին, սարդերին և վամպիրներին, անցկացնելով նրանց շահագործության ձգտումների սահմանափակման քաղաքականություն։ Համբերում եյինք, վորովհետև չեյինք կարողանում փոխարինել կուլակային տնտեսությունը և կուլակային արտադրությունը։ Այժմ մենք հնարավորություն ունենք հեշտությամբ փոխարինել նրանց տնտեսությունը մեր կոլխոզների և խորհտնտեսությունների տնտեսությամբ։ Այլևս կարիք չկա համբերելու այդ սարդերին և արյունարբուներին։ Համբերել այսուհետև այդ սարդերին և արյունարբուներին, վորոնք այրում են կոլխոզները, սպանում կոլխոզային գործիչներին և փորձում խափանել ցանքսը, նշանակում է բանվորների և գյուղացիների շահերի դեմ գնալ։

Այդ պատճառով կուլակության, որպես դասակարգի, վերացման քաղաքականությունը պետք է կատարվի ամենայն համառությամբ և հետևողականությամբ, որին ընդունակ ենք մենք»:

Այսպես է դնում կուլակության դեմ պայքարելու հարցը լենինյան կոմկուսը: Ուրիշ կերպ մենք չենք կարող մոտենալ այդ խնդրին, որովհետև կոլխոզների ու կոլեկտիվացման առաջին ու ամենավոխերիմ թշնամին ու խոչընդոտը կուլակն է:

Եթե յեթե այսոր դեռ անդրկովկասյան պայմաններում մենք համատարած կոլեկտիվացման խնդիրը և այդ համատարածի բազայի վրա՝ կուլակության լիկվիդացիայի խնդիրը չենք դնում մեր կազմակերպությունների առաջ, յեթե Կոմկուսը մեզանից պահանջում է այս 1931 թվի ընթացքում կոլեկտիվացման թափը հասցնել մեր իրականության մեջ հիմնականում 20—25—30 տոկոսի հացահատիկային ռայոններում և 50 տոկոսի բամբակի և թեյի ռայոններում, դա չի նշանակում, որ մենք չպիտի ջախջախենք կուլակության դիմադրությունը և պայքարը կոլխոզների դեմ, որ մենք չպիտի ուժեղացնենք մեր ամենորյա պայքարը կուլակության ու նրա համախոհների դեմ:

Կազմակերպելով չքավորներին ու միջակներին, հենվելով կոլխոզնիկների աջակցության վրա, մենք պետք է կարողանանք վերացնել կուլակության դիմադրությունը դյուղի վերակառուցման կոլեկտիվացման լենինյան աշխատանքներում և պայմաններ ստեղծել հետագայում իրացնելու կուսակցության հիմնական և գլխավոր լոզունգը՝ կուլակության լիկվիդացիան, որպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման բազայի վրա:

ԱՋԱԿՑԵԼ ԱՄԵՆ ԿԵՐՊ

ԿՈՒԽՈԶՆԵՐԻՆ

Բացի կուլակության դիմադրության վերացումից, մեզ հարկավոր է ամեն կերպ աջակցել մեր բոլոր կոլխոզներին, մանավանդ սկզբնական շրջանում, ցույց տալով միջակին ու չքավորին, որ նրանք կոլխոզում ոգտվելու յեն ոչ միայն կոլլեկտիվ աշխատանքի առավելություններից, այլ և պետության կողմից տրվող մի շարք արտոնություններից ու դրամական-նյութական միջոցներից՝ համաձայն Լենինի ցուցումների:

Եթե անցյալ տարի խորհրդային կառավարությունը կոլխոզներին ոգնելու համար բաց թողեց 500 միլիոն ռուբլի, մեր աջ և «ձախ» ոպորտունիստներին ու կոլխոզային շարժման դեմ դնացող բոլոր տարրերին, կուլակներից սկսած մինչև կոնդրատևական-պրոֆեսորները, դուր չեկավ մեր այդ քայլը: Նրանք սկսեցին ելի իրենց սիրած պրովոկացիան, որ իդուր դումարներ են ծախսվում, որ 500 միլիոն ռ. ջուրն է թափվում, որ, իբր թե, Լենինը դեմ է յեղել նման աջակցության և այլն:

15328-57

Այն ինչ, ամեն անգամ Լենինը չեշտել է այդ աջակցության անհրաժեշտությունը, ֆինանսական ոգնության կարևորությունը:

Իր 1918 թվի մասում ահա ինչ է հայտարարել Լենինը. «Խորհրդային իշխանությունը վճռել է բաց թողնել մեկ միլիարդ ռուբլի, որպես հատուկ ֆոնդ գյուղատնտեսության բարձրացման համար: Բոլոր գոյություն ունեցող և նոր կազմվող կոմունաներին ցույց կտրվի դրամական և տեխնիկական ոգնություն»:

Ցեթե Լենինը հնարավոր եր գտնում 1918 թվին, քաղաքացիական կռիվների շրջանում,— երբ մեր տնտեսությունն ամենաքայքայված դրության մեջ եր,— հարց բարձրացնել դրամական և տեխնիկական ոգնության մասին, դա ինքնըստինքյան պարզ ցույց է տալիս, թե ինչ հսկայական նշանակություն եր տալիս Լենինն այդ պետական աջակցությանը:

Ահա ինչո՞ւ այնքան ճիշտ են ընկ. Ստալինի խոսքերը, երբ նա հենվելով Լենինի հայտարարության վրա, ասում է.— «Կոլխոզներն արտոնություններ կրս տանան ինչպես հողով, մեքենաներով, տրակտորներով, սերմացույցով և այլն, այնպես և հարկերի թեթև վացումով ու վարկեր ստանալով»:

«Ինչո՞ւ չէ խորհրդային իշխանությունն արտոնություններ և առավելություններ տալիս կոլխոզներին,— հարցնում է ընկ. Ստալինը և պատասխանում,— վորովհետև կոլխոզը հանդիսանում է միակ միջոցը գյուղացիների համար՝ աղքատությունից ազատվելու ուղղությամբ»:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԵՔ ՈՊ ՅՄԱՆՆԵՐԸ

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Այսպես ուրեմն, կոլլեկտիվացման գաղափարն ու առաջարկը Լենինին են պատկանում, Լենինն է յեղել կոլլեկտիվացման ամենաջերմ կողմնակիցն իր ժամանակ: Լենինն է ցույց տվել մեր կուսակցությանը, պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը կոլլեկտիվացման ուղին, ինչպես նաև Լենինն է ցույց տվել այն սկզբունքներն ու պայմանները, վորոնց հիման վրա մենք կարող ենք և պետք է զարգացնենք կոլլեկտիվացումը մեզ մոտ: Այդ հիմնական, գլխավոր պայմաններից յերկուսի՝ պայքար կուլակության դեմ ադրության դեմ և պետական աջակցության անհրաժեշտության մասին՝ մենք արդեն խոսեցինք:

Կոլլեկտիվացման աջողության յերրորդ պայմանը, դա ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՓՈՐՁԻ, ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ցույց տալու, համոզելու սկզբունքը չխախտելու պայմանն է:

Լենինն ամենակտրուկ ու ամենավճռական կերպով հայտարարել է իր ժամանակ — «Այժմ մեր խնդիրն է անցնել հողի համայնական մշակմանը, անցնել խոշոր տնտեսության: Սակայն խորհրդային իշխանության կողմից ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՎՈՉ ՄԻ ՀԱՐԿԱԴՐՈՒՄ, վոչ մի որենք չի ստիպում: Գյուղատնտեսական կոմմունան հիմնվում է ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ, հողի համայնական մշակմանը կարելի յե անցնել միմիայն կամա-

վոր կերպով, բանվորա-գյուղացիական կառավարության կողմից այդ գործում վոչ մի ստիպում չի կարող լինել և որենքը թույլ չի տալիս։ Եթե մեզանից վորևե մեկը նկատել է այդպիսի ստիպում, դուք պետք է իմանաք, վոր դա չարամտություն է, վոր դա որենքի խախտում է, վորը մենք կաշխատենք ուղղել բոլոր ուժերով և կուղղենք»։

Այսպիսի վճռական հայտարարություններ Լենինն արել է ամեն անգամ, երբ խոսք է եղել կոլեկտիվացման մասին։ Լենինը, վորը միշտ կրկնում էր ու սովորեցնում մեզ բոլորիս՝ «չը հանդգնել հրամայել միջակին», ուրիշ կերպ չեր կարող մոտենալ խնդրին։

«Լենինիզմը,— գրում է ընկ. Ստալինը,— սովորեցնում է, վոր գյուղացիներին կարելի յե համոզել կոլեկտիվ տնտեսության առավելությունները միայն այն դեպքում, յեթե ապացուցեն գործով և փորձով, վոր կոլխոզն անհատական տնտեսությունից ավելի լավ է, վոր նա ավելի ձեռնտու յե, քան անհատական տնտեսությունը, և վոր կոլխոզը հնարավորություն է տալիս գյուղացիությանը դուրս գալու կարիքից և աղքատությունից։ Լենինիզմը սովորեցնում է, վոր այդ պայմաններից դուրս կոլխոզները հաստատուն չեն կարող լինել։ Լենինիզմը սովորեցնում է, վոր կոլխոզային տնտեսությունն ուժով կազմելու ամեն մի փորձ, կոլխոզները հարկադրման կարգով հաստատելու ամեն մի փորձ կարող են տալ—միմիայն բացասական արդյունքներ, կարող են միայն խրտնեցնել գյուղացիներին կոլխոզային շարժումից»։

Ահա Լենինի գլխավոր յերրորդ պայմանը, վորը հնարավորություն է տալու պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը՝ վերակառուցել գյուղի յերամնաց անհատական, մանր, չքավորության մեջ խարխափող տնտեսությունները։

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՅԵՎ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր կամավորության սկզբունքը յերբեք չի նշանակել և չի կարող այս դեպքում ել նշանակել, վոր հարկավոր չե ղեկավարություն ցույց տալ կոլխոզշարժմանը։ Կամավորության սկզբունքն ինքնահոսի կարող են վերածել միայն ամենախայտառակ ոպորտունիստները գործնականում։ Կամավորության սկզբունքը չի կարող բացասել բոլշևիկյան ղեկավարության անհրաժեշտությունը։ Այս հանգամանքը չպիտի մոռանան մեր կազմակերպությունները վոչ մի դեպքում։

Այսպես, ուրեմն, խորտակվում է կուլակության ու նրա ագենտուրայի՝ աջ և «ձախ» ոպորտունիստների, կոնդրատեևական պրոֆեսորների, վորոնք կապիտալիզմի բացարձակ կազմնակիցներն են մեր յերկրում, խորտակվում է այս հակահեղափոխական վոհմակի նաև այն պրովոկացիան կոլխոզների դեմ, վոր, իբր, Լենինը յերբեք հարց չի բարձրացրել կոլեկտիվացման մասին, վոր նա դեմ է յեղել կոլխոզներին ա-

ջակցություն և ֆինանսական ոգնություն ցույց տալու խնդրում:

Ամեն մի աշխատավոր գյուղացի պետք է լավ իմանա, որ կոլեկտիվացման լոզունգը Լենինի լոզունգն է, որ իր տնտեսության միակ փրկությունը վերջ ի վերջո կոլխոզի մեջն է, կոլխոզի ուղիներում, և դրա համար է, որ ԼԵՆԻՆԸ հայտարարել է՝ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԻՆ ՑԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴՆԵԼՈՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ»:

«ՑԵԼՔԸ—ՄԻՄԻԱՅՆ ՀՈՂԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԸՇԱԿՄԱՆ ՄԵՋ Է»: Այս գիտակցությունը մենք դեռ չունեինք, բայց կյանքն ինքն է մեզ հասցնում այդ համոզմանը: ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԸ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ, ԳՅՈՒՂԱՑԻՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,—ԱՀԱ ՎՈՐՏԵՂ Է ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՋԵՌՆՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱՀԱ ԻՆՉԻ ՄԵՋ Է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԸ, ՈՒԺԵՐԻ ՏՆՏԵՍՈՒՄԸ ՑԵՎ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ, ՋՐԻԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ»:

Ո՞վ կարող է ասել այս կտրուկ, պարզ խոսքերից հետո, որ Լենինը կոլխոզների, արտելների ու կոլեկտիվացման մասին վոչինչ չի ասել, կամ թե դեմ է յե՛ղել գյուղատնտեսության սոցիալիստական վերակուցմանը:

Մի՞թե կարիք կա այդ բոլորից հետո նորից հաստատելու, որ մեր կոլեկտիվացման ուղին, դա Լենինի ցույց տված ուղին է, որ մենք գնում ենք այս կարևոր բազուն խնդրում Լենինի ուղիով, որովհետև ուրիշ

ի՞նչ ուղիով կարող է գնալ Լենինի կուսակցությունը, Կոմկուսի լենինյան կենտկոմի ղեկավարությամբ:

Ահա ինչու մեր գյուղի չքավորն ու միջակը պետք է ամուր բռնեն կոլխոզի ուղին, որը նրանց փրկության, բարգավաճման, մանր տնտեսության յետամնացությունից և աղքատությունից ազատվելու միակ բոլշևիկյան ուղին է:

„ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ՅԵՐԲ ՄԵՋ ԿԸ ՀԱՋՈՂՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԿՈԼԼԵԿՏԻՎ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ, ԸՆԿԵՐՈՎԻ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻԱՅՆ ՅԵՐԲ ԿԸ ՀԱՋՈՂՎԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԸՆԿԵՐՈՎԻ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻԱՅՆ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՆ ԻՍԿԱՊԵՍ ԿԱՊԱՑՈՒՑԻ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԻՐ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻԱՅՆ ԻՍԿԱՊԵՍ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԱՊԵՍ ՆԱ ԻՐ ԿՈՂՄԸ ԿԸ ԳՐԱՎԻ ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆ ԳՅՈՒՂԱՑԻԱ ԿԱՆ ՄԱՍՍԱՅԻՆ“ ԼԵՆԻՆ

ԿՈԼԽՈԶՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

„ԿՈԼԽՈԶԻ ՀԵՏ, ԹԵ ՆՐԱ ԴԵՄ"

Մեր այս հոդվածաշարքը գրված է յեղել «Պրոլետար»-ի համար դեռ հունվարին, ուստի կոլխոզշինարարության մի շարք հրատապ խնդիրների մասին հոդվածում վոչինչ չի ասված: Մենք կարևոր ենք համարում թեկուզ համառոտ կերպով, կանգ առնել կոլխոզշինարարության այս շրջանի մի յերկու կարևոր խնդիրների վրա, կոլխոզնիկների ու մեր բոլոր կազմակերպությունների ուշադրությունն այդ խնդիրների իրացման շուրջը կենտրոնացնելու նկատառումով:

Միութենական խորհուրդների վեցերորդ համագումարն առանձնապես կանգ առնելով կոլխոզաշինարարության խնդիրների վրա, հետևյալ կերպով է դնում կոլխոզ մտնելու հարցը չքավորի և միջակի առաջ՝ «Ժամանակ է արդեն վճռելու կոլխոզից դուրս մնացած չքավորի և միջակի համար, թե ո՞ւմ հետ են ուզում նրանք մնալ՝ ԿՈԼԽՈԶԻ ՀԵՏ, ԹԵ՞ ԿՈԼԽՈԶԻ ԴԵՄ»:

Ինչո՞ւ յե համագումարը հարցն այդպես վճռական կերպով դնում:

Վորովհետև, յեթե կոլեկտիվացման սկզբնական շրջանում, կամ նույնիսկ մի տարի առաջ չքավորն ու միջակը դեռ կասկածում եյին կոլխոզի առավելությունների վերաբերմամբ, յեթե նրանց համար դեռ պարզ չեյին այդ խնդիրները, յեթե գործնականում կոլխոզները դեռ չեյին կարողացել իրենց դրական արդյունքներով համոզել չքավորին ու միջակին կոլխոզի տված առավելությունների մեջ, ապա այսոր այդ առավելություններն ավելի քան պարզ են ամենքիս համար:

Իսկ յեթե կոլխոզի առավելությունները ավելի քան պարզ են, արդեն յեթե կոլխոզները գործով ու փորձով ցույց տվին ամեն մի աշխատավոր գյուղացու իրենց առավելություններն ու աջողությունները անհատական տնտեսությունների դիմաց, ել ի՞նչ պատճառներ կարող են խանգարել չքավորին և միջակին կոլխոզ մտնելու համար, ել ինչո՞ւ չքավորն ու միջակը պետք դանդաղեն կոլխոզ մտնելու գործում, կամ ել ինչո՞ւ յեն նրանք սպասելու:

Պարզ է, վոր չքավորն ու միջակը, յեթե նրանք, այս խնդրում կուլակային տրամադրությունների ազդեցության տակ չեն գտնվում, նրանք պետք է վերջնականապես վճռեն կոլխոզ մտնելու հարցը:

Ամբողջովին ճշմարիտ եյին մեր կուսակցության անմահ ղեկավարի՝ Լենինի խոսքերը, վոր «ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ՅԵՐԲ ՄԵԶ ԿԱԶՈՂՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՅՈՒՅՑ ՏԱԼ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԻ ՀԱՍԱՐԱԿԱՆ, ԿՈԼԵԿՏԻՎ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ, ԸՆԿԵՐՈՎԻ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻԱՅՆ ՅԵՐԲ ԿԱԶՈՂՎԻ ՈԳՆՈՒԹՅՈՒ ՅՈՒՅՑ ՏԱԼ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԸՆԿԵՐՈՎԻ, ԱՐՏԵԼԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՈՎ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻԱՅՆ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԻՍԿԱՊԵՍ ԿԱՊԱՑՈՒՑԻ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԻՐ ՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԸ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻԱՅՆ ԻՍԿԱՊԵՍ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԱՊԵՍ ՆԱ ԻՐ ԿՈՂՄԸ ԿԳՐԱՎԻ ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԻՆ»: ԽՈԶԻ ԴԵՄ»:

Ահա ինչու այնքան տեղին ու ժամանակին է, երբ միությունական խորհուրդների վեցերորդ համագումարն իր բանաձևի մեջ գրում է՝

«ՀԻՄԱ ՅԵՐԲ ԶԳԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՄԻՋԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՀԱՄՈԶՎԵԼՈՎ ԿՈԼԽՈԶԻ ՏԵՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԵՋ, ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ ԵՆ ԲՌՆՈՒՄ, ԻՍԿ ԿՈՒԼԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆ՝ ՎԵՐԱՑՎՈՒՄ Է ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳ, ԱՄԵՆ ՄԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԳԱՎՈՐԻ ՅԵՎ ՄԻԶԱԿԻ ԱՌԱՋ, ՎՈՐԸ ԴԵՌ ՉԻ ՄՏԵԼ ԿՈԼԽՈԶ, ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ՝ ԿՈԼԽՈԶԻ ՀԵՏ, ԹԵ՞ ԿՈԼԽՈԶԻ ԴԵՄ:»

Իսկապես, ել ի՞նչու յե սպասելու չքավորն ու միջակը, երբ կոլխոզի տված առավելությունները պարզից ել պարզ են իր համար, չնայած կոլխոզաշարժման մի շարք թերություններին: Ել ինչո՞ւ սպասել, երբ տասը միլիոն չքավոր և միջակ տնտեսություններ Խորհրդային Միության մեջ արդեն կոլխոզ են մտել և հսկայական աջողությամբ զարգացնում են իրենց կոլլեկտիվ տնտեսությունները:

Ել ինչո՞ւ սպասել, երբ խորհրդային իշխանությունն ամեն մի քայլափոխում աշխատում է հնարավոր չափով ամեն կերպ ոգնել կոլխոզի զարգացմանը՝ թե վարկով, թե սերմացույով, թե մեքենաներով, տրակտորային կայանների աշխատանքով և թե մի շարք արտոնություններով բոլոր դերքերում, և ի միջի այլոց, գյուղատնտեսական հարկի արտոնությունների միջոցով:

Այս պատճառով է, որ համագումարն ուրիշ կերպ չեր կարող մոտենալ այս խնդրին և վերջնական պատասխան և պահանջում կոլխոզից դուրս մնացած չքավորից և միջակից, թե՝ ո՞ւմ հետ են ուզում դնալ նրանք՝ կոլխոզի՞, թե՞ կուլակի: Յեթե կոլխոզի, ապա հարկավոր է կոլխոզ մտնել և պայքարել կուլակի դիմադրության ու պրովոկացիաների դեմ, պայքարել

կոլխոզի ամրացման ու զարգացման համար և դառնալ —ոչ դոհոդով ոս ժոսյոտ դոմբիտոդոՀվ դվմոՀնվՀվսով նարանը գյուղում, վորովհետև ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՍՈՒՀԵՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՆԱՐԱՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ»: (Համագումարի բանաձևից):

Այս ամենը, իհարկե, վոչ մի դեպքում չի նշանակում, վոր մենք այս կամ այն չափով վերացնում ենք լենինյան ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ սկզբունքը, այսինքն կամավոր կերպով, առանց վարչական ճնշումների, ու «հրամանների» չքավորներին ու միջակներին կոլխոզ գրավելու լենինյան սկզբունքը:

Չպետք է մոռանալ և վոչ մի դեպքում, մանավանդ մեր՝ անդրկովկասյան իրականության յետամնաց ռայոնների համար, վոր ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՆՈՒՄ Է ՎՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, ինչպես այդ չեշտել են քանիցս մեր կուսակցությունը և կոմկուսի ղեկավար ընկ. Ստալինն իր բոլոր յելույթների մեջ կոլխոզաշարժման վերաբերմամբ:

Յեվ յեթե վեցերորդ համագումարն այդքան վրճռական կերպով է դնում անհատական չքավորների ու միջակի առաջ կոլխոզ մտնելու հարցը, դա չի նշանակում, վոր մենք չպետք է ամենալայն բացատրական մասսայական աշխատանքը տանենք այդ խնդիրը մասսաների համար պարզելու նպատակով: Հասկանալի յե, վոր նման մասսայական-բացատրական աշխատանքն ավելի քան կարևոր է, աշխատանք, վորը մեզնից կպահանջի լուրջ վերաբերմունք, առանց խեղաթյուրումների և առանց աջ ու «ձախ» ֆայլաբոզոբությունների: Հարկավոր է և այսուհետ ՀԱՄՈԶԵԼ, գյուղացիներին կոլխոզային ուղիի ճեռնտվության ու անհրաժեշտու-

թյան մեջ, վորպես միայն յելքը գյուղացու մանր, անհատական տնտեսության, չքավորության ու յուտաճացության փակուղուց։

Այսպես է համագումարի դիրեկտիվը և այն պետք է իրականացնել, մաղաչափ անդամ չխախտելով և չխեղաթյուրելով կոլխոզ մտնելու կամավորության սկզբունքը։

ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԿՈԼԽՈԶԻ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հետևյալ կարգի խնդիրները, վորոնց վրա կանգ է առել վերջերորդ համագումարը և վորոնց վրա հարկավոր է կենտրոնացնել մեր կոլխոզների ուշադրությունը, դա ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ։

Մեզ հարկավոր է չեչտել ամեն կերպ և ամենավճռական կերպով, վոր չնայած կոլխոզաբժման զարգացման և կոլխոզների ներքին աշխատանքների վորոշ կարգավորման ավելի քան զգալի աջողություններին ու դրական արդյունքներին, կան մի շարք այնպիսի խոշոր թերություններ ու բացեր այս բնագավառում, վորոնց վերացնելու վրա հարկավոր է բոլշևիկորեն կենտրոնացնել մեր բոլոր կազմակերպությունների և ամենից առաջ մեր կոլխոզների ամենալուրջ ուշադրությունը։

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԲԱՑԸ՝ ԴԵՌ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՈՐ ԵԼ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ Է ՅԵՎ ԿՈԼԽՈԶԻ ԲԵՐԲԻ ՍԽԱԼ ԲԱՇԽՈՒՄԸ։

Համամիութենական խորհուրդների վերջերորդ համագումարն իր բանաձևի մեջ՝ կոլխոզշինարարության մասին՝ հետևյալ կերպով է վորակում այդ բացերը. «Կոլխոզների աշխատանքների մեջ 1930 թվին ամենագլխավոր և ամենավնասակար բացերն եյին՝

ԱՌԱՋԻՆԸ՝ ԿՈԼԽՈԶԻ ԲԵՐԲԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՎՈՉ ԹԵ ԱՄԵՆ ՄԻ ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԵՄԱՏ, ԱՅԼ ՀՈԳՈՒ ՎՐԱ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՈՂ ՅԵՎ ՎԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԲԵՐԲԻ ՀԱՎԱՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»։

Համագումարը պարզ և կտրուկ կերպով պահանջ է դնում՝ կազմակերպել բերքի բաշխումը մի խմբային կոլխոզնիկի աշխատանքի վորակի և քանակի համեմատ, վոր նշանակում է՝ նա յե՞ չատ ստանում, ով չատ է աշխատել։ «Կոլխոզի ամբողջ բերքի բաշխման սկզբունքը՝ ՈՎ ՇԱՏ ՅԵՎ ԼԱՎ Է ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՅԵԼ ՇԱՏ Է ՍՏԱՆՈՒՄ, ԻՍԿ ՈՎ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՎՈՉԻՆՉ ՉԻ ՍՏԱՆՈՒՄ» — այս սկզբունքը պետք է որենք դառնա ամեն մի կոլխոզի և կոլխոզնիկի համար»՝ ահա համագումարի վճռական պահանջը, վորը մենք պետք է կյանքի մեջ մտցնենք խսկույն և յեթ և առանց խեղաթյուրումների։

ԱՌԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԱՆՑՆԵԼ ԿՏՈՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՍԴԵԼՇՉԻՆԱՅԻ) ՅԵՎ ԱՇԽԱ ԱՆՔՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՈՐՈՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒՆ

Հսկայական նշանակություն ունի կոլխոզի ամրապնդման համար նաև նրա ներքին աշխատանքի կազմակերպումը և առաջին հերթին՝ ՍԴԵԼՇՉԻՆԱՅԻ (ԿԸՏՈՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ) ԱՆՑՆԵԼԸ։

«Հիմնական գյուղատնտեսական աշխատանքների մեջ՝ վարի, ցանքի, հնձի, կալի ժամանակ՝ պետք է մասսայական ծավալ ստանա ԿՏՈՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՎՈՐԸ ԳՆԱՀԱՏՎԵԼՈՒ ՅԵ ԱՇԽԱՏԱՆՔԱՈՐՈՎ», այլ վոչ թե փողով, ինչպես մի շարք կոլխոզներում դեռ մինչև հիմա յել տեղի ունի այդ։

Համագումարի այս բոլշևիկյան պահանջի վրա հարկավոր ուշադրություն դեռ մինչև այսոր մենք չենք դարձրել, այն ինչ, մեր բոլոր այդ թվում և

կոլխոզային որդանների համար պետք է պարզ լինի, վոր այս հանգամանքը՝ այսինքն սդելշչինան (կտորով աշխատանքի) և այդ աշխատանքն աշխատանքարով, այլ վոչ թե փողով գնահատելն ունի վճռական նշանակություն կոլխոզի ամրացման ու անի համար:

Կուլակները ու կոլխոզի թշնամիները կաշխատեն ամեն կերպ (և աշխատում են արդեն) դուրս գալ սդելշչինայի դեմ, քարոզելով որավարձի անցնել, կաշխատեն դուրս գալ աշխատանքարարի դեմ, առաջ քաշելով ռոճիկի սկզբունքը, աշխատանքը փողով գնահատելու կուլակային սկզբունքը:

Իսկ մեր պարտականությունը պետք է լինի վրճռական ու մահացու հարված տալ «որավարձին» անցնելով սդելշչինային, կտորով աշխատանքին, վորովհետև առանց կտորով աշխատանքի հնարավոր չի լինի բարձրացնել կոլխոզի աշխատանքարարությունը, հնարավոր չի լինի ազատվել լոդրերից ու ծույլերից, «գինդյալիկով որ մթենեցողներից», բոլոր նրանցից, վորոնք «ուրիշի աշխատանքի արդյունքից» կցանկանային ոգտվել՝ առանց հարկավոր ջանքեր թափելու:

Մեր կոլխոզները պետք է ՇՏԱՊ ԿԱՐԳՈՎ, ԿԱՆՈՆԱՎՈՐԵՆ ԻՐԵՆՑ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԿԱՆՈՆԱՎՈՐԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՔԸ, ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՀԱՇՎԱՌՔԸ, ԲԵՐՔԻ ՈՒ ՍՏԱՑՎԱԾՔԻ ՀԱՇՎԱՌՔԸ՝ ԿԱՆՈՆԱՎՈՐԵՆ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴՈՐԾԸ՝ ՍԴԵԼՇՉԻՆԱՅԻ ԱՆՑՆԵԼՈՒ, ԱՄԵՆ ՄԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՐԱՐՈՎ, ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ՍՈՑՄԸՐՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԵՆԱԼԱՅՆ ԶԱՓԵՐՈՎ ԾԱՎԱԼԵԼՈՒ ԼԵՆԻՆՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ:

Առանց այս հիմնական պայմանների և առանց վերացնելու կոլխոզաշարժման զարգացման բոլոր թերությունները, մեր կոլխոզները չեն կարողանա լուծել իրենց վրա դրած, հնգամյակի յերբորդ՝ վճռական տարվա հսկայական խնդիրները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու վերելքի համար և հետևապես չեն կարողանա հարկավոր թափով անցկացնել այս տարվա բոլշևիկյան գարնանացանն ու ջախջախիչ հակահարված տալ կուլակության պրովոկացիաներին և նրա աջ ու «ձախ» գործակալների բոլոր վոտնձգություններին կոլխոզաշարժման դեմ:

Մանավանդ չեն կարողանա աջող բոլշևիկյան պայքար մղել գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքման և «ձախ» ոպորտունիզմի արտահայտությունների դեմ, դեպի այդ արտահայտությունները հաշտվողական վերաբերմունք ցուցադրողների դեմ, ինքնահոսի, թափթրփվածության, լոդրերի ու ծույլերի և բոլոր ուրիշ խոչընդոտների դեմ՝ կոլխոզաշարժման բոլշևիկյան առաջընթացի, բուռն զարգացման ու վերջնական ամրապնդման համար:

ՀՀ Ազգային գրադարան
NL0204291

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.